



ԱՐՑԱԽԸ ԵՍ ԵՍ

(Բարեգործական համերգ Դոնի Ռոստովում)

Ժամանակների պատմությունների ընթացքի մեջ ծնվեց ու գորացավ մի ազգ, որն իրեն հայ կոչեց: Ու ամեն անգամ այդ ազգը պետք է պատմության քառուղիներում բռնուցք դառնա, կանգնի իրենից ուժեղի դեմ պահպանելու իր արժանապատվությունը ու հաստատելու պատմական հայրենիքում ապրելու իր իրավունքը: Քառուղյա պատերազմի օրերին ևս հայ ժողովուրդը համախմբվածության, զինվորի և բանակի կողքին կանգնելու հաստատակամությամբ ապացուցեց, որ մենք միասնական ուժ ենք ոչ միայն մեր պատմության քառուղիներում, այլև շարունակում ենք այդպիսին մնալ: Այս ամենի խոստովանանքն արվեց Դոնի Ռոստով քաղաքում տեղի ունեցած «Արցախը ես եմ» բարեգործական համերգն է իր հայրենասիրական ոգով ու բովանդակությամբ և համայն հայությանը ուղղված

իրական, այլ ոչ թե համացանցի միջոցով: Մեզ հյուրընկալել էին քառուղյա պատերազմի ժամանակ վիրավորված Մեխիլյան Հայկը, Թորոսյան Հայկը, Դավթյան Դանիելը, և նրանց օգնելու նպատակով խրմբին էին միացել «Դիրքապահ քառուղյա պատերազմի մասնակիցների միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Մանուել Մանուկյանը և Սամվել Մանուկյանը:

Հարաշուրջամբ պետք է նշել, որ կազմակերպված համերգին մասնակցելու համար մեր առաջարկին միանգամից սիրով արձագանքեց նաև սիրված ժողովրդական երգիչ Արսեն Գրիգորյանը (Մրոն): Կես ժամ շարունակ սիրված երգիչը հանդիսատեսին ոգևորեց իր հայրենասիրական երգերով և հայաշունչ ոգով:

Համերգը սկսվեց ս. Հարություն եկեղեցու քահանա տեր Տիրան Ավագյանի



նակությունների և տոմսերի վաճառքից գոյացած 181,000 ռուբլին ծախսվեց տղաներին և սիրված երգչին Հայաստանից ինքնաթիռով բերելու, դահլիճ վարձակալելու, տոմսերի վաճառքը իրականացնելու, բազում այլ կազմակերպչական հարցեր տեղում լուծելու համար: Բացի այս ամենից տղաները մեկ շաբաթ գտնվեցին «Նադեժդա» առողջարանում, նրանց համար կազմակերպվեցին տարբեր բնույթի էքս-

Շնորհակալություն բոլոր մասնակից պարային խմբերին «Արփի» (Հրաչյիկ Գևորգյան), «Ջարթոնք» (Փենյա Հակոբյան), «Հայաստանի փայլեր» (Արմինե Օհանյան), «Աստղիկներ» (Հասմիկ Դանիելյան), «Ջվարթնոց» (Անահիտ Չուխաջյան), «Ուրարտու» (Լիլիթ Վարդանյան), «Բարակուրա պրոդյուսերական կենտրոն» (Արմեն Երիցյան), Հայկ Բավեյան (դուդուկ), Սամվել Մխիթարյան (ջութակ), Զինա



սիրով ու ջերմությամբ՝ որպես ձոն մեր միասնականությանը: Տեղի հայությունը այս էլ երրորդ տարին է համախմբվում է մեկ գաղափարի շուրջ. բարեգործական համերգի շրջանակներում, լինել հայ զինվորի կողքին, ինչ-որ չափով սատար կանգնել նրա հոգսերին:

Առաջին տարի օգնությունը, հասավ Վարդենիսի շրջան գյուղ Զոլաքար գոմված

օրհնությամբ: Բացման խոսքով ելույթ ունեցան Դոնի Նախիջևանի հայկական համայնքի ղեկավար Հարություն Մուրմալյանը և Դոնի Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոս Վարդան Ասոյանը:

Տղաները պարգևատրվեցին և ստացան դրամական աջակցություն պարոն Հարություն Մուրմալյանի կողմից: Համերգի ընթացքում կատարված հանգա-



կուրսիաներ դեպի թանգարաններ, հայկական գյուղեր, տեսարժան վայրեր: Տղաները վայելեցին նաև Դոն գետի գեղեցկությունը կատարելով կեսօրյա նավարկություն:

Իսկ երեկոները հագեցած էին բազմաբնույթ հանդիպումներով երիտասարդների, տեղի պատկան այրերի հետ: Դե իհարկե, օրը լրացնում էին տեղի գործարարները կազմակերպելով տղաների ընթերցումը: Շնորհակալություն ենք հայտնում բոլոր այն կառույցներին, որոնք գտնվեցին մեր կողքին. ավիատոմսերի ամրագրման ծառայություն «Լայներ», «Ջավախք», «Մոցար», «Դոն շաշիկա», «Քյաբաբ-գրիլ հաուզ», «Լավաշ հաուզ» ռեստորանային ցանցեր, Արմեն Միրզոյանի ջերմ ու տաք հայկական օջախ: Կան նաև անհատ բարերարներ, որոնք չցանկացան, որ անուններ հրապարակենք: Իրապես, եթե չլինեին այս բոլոր բարերարները, ապա այն գումարը, որը հավաքվեց համերգի շրջանակներում, հաստատ չէր բավականացնի այս հսկայածավալ ծրագիրը իրականացնելու համար: Մայիսի 29-ից մինչև հունիսի 5-ը տղաները Դոնի Ռոստովում արժանացան բարձր հյուրընկալության, վայելեցին տեղի հայության սերն ու հարգանքը:

Շախնագարովա (մենապար), Աննա Օստորյան (ադմինիստրատոր), Արմեն Մաֆարյան (հաղորդավար):

Համերգի այս բոլոր մասնակիցները ևս ստացան պատվոգրեր հայկական մշակույթը բարձր պահելու և հավուր պատշաճի այն օտար երկրում ներկայացնելու համար, որն էլ նրանց հանձնեց Դոնի Նախիջևանի հայկական համայնքի գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը: Նա ևս այս օրերին ջանք ու եռանդ չէր խնայում տղաների ընդունելությունը բարձր մակարդակով ապահովելու համար:

Հանդիսատեսը երեք ժամ շարունակ ապրեց հրճվածքի, հարգանքի, խոնարհման և անշուշտ հպարտության պահեր:

Դիրքում են այն ժայռերը, որոնց կողքով դեպի առաջ սլանում են հայ քաջերը: Ու դողում են այն հողերը, որոնք արդեն տրորում են մեր հայրենի անպարտները: Էլ ուր մնաց չսարսափի դեռ ի ծնե վախկոտ թուրքը, Եթե արդեն գիտի հայի միասնական քար բռնուցքը:

Իմ հայ ժողովուրդ, մեկ անգամ ևս միասին ապացուցեցինք, որ մեր փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է: Հզոր ենք մեր բազկով, ուժեղ մեր մտքով, անկոտրում մեր հավատքով:

Լուսինե ՊԵՏԱՆՅԱՆ



ազատամարտիկներ Գառնիկ Մելքոնյանի և Դավիթ Հովսեփյանի ընտանիքներին:

Երկրորդ տարի կապ հաստատեցինք «Աջակցություն վիրավոր զինվորներին» հասարակական կազմակերպության ղեկավար, չքնաղ հայուհի Հայկուհի Մինասյանի հետ, որի բարեխիղճ օգնությամբ և անմիջական մասնակցությամբ կարողացանք մի շարք զինվորների խնդիրներ և հոգսեր ևս թեթևացնել:

Այս տարի, արժանանալով տեղի հայ համայնքի, պաշտոնյա այրերի և գործարարների բարձր վստահությանը, Դոնի Նախիջևանի հայկական համայնքի ղեկավար Հարություն Մուրմալյանի բարձր աջակցության և ներքո որոշեցինք Դոնի Ռոստով հրավիրել զինվորներին, որպեսզի արտերկրում ևս տեսնեն և ճանաչեն նրանց